

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

PERSICA VULGARIS MILL. ԾԱՂԿԱՓՈՇՈՒ ԾՆՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ
ԿԱՊԱՍՏ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ՓՈԽՆԵՐԻ ՀԵՏ

Վ. Ս. ԹՈՎՄԱՆՅԱՆ

Ուսումնասիրվել է *Persica vulgaris* Mill.-ի (դեղձենի լոճ գծալոր կարմիր սորտի) ծաղկափոշու ծլունակության և նրա կենսունակության պահպանման հարցը:

Նյութ և մեթոդ: Ծաղկափոշին ծեցվել է սախարոզայի տարրեր կոնցենտրացիա՝ 5, 10, 15, 20, 25% ունեցող լուծույթներում: Լուծույթին ավելացվել է կայքիումական կրճպլեքս [1], ստուգիչ է հանդիսացել թորած ջուրը: Փորձերը դրվել են 22—25°-ում, լուսային և մթնոթյան պայմաններում: Ծաղկափոշու ծլունակության տոկոսը հաշվարկվել է մանրադիտակի տեսադաշտի 500 փոշեհատիկներից: Նյութը բերվել է Գինեզործովյան և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտից: Ծաղկափոշին պահվել է էքսիկատորում՝ CaCl_2 -ի միջավայրում:

Արդյունքներ և ֆենաբուսում: Կոկոնակալման փուլ. Աղյուսակից երևում է, որ *P. vulgaris* Mill. փոշեհատիկները լույսի պայմաններում ծլեցնելիս ստուգիչում ցուցաբերում են բարձր ծլունակություն առաջին շաբաթում, որը կազմում է 75,6%, ըստ երեք տարվա ամփոփիչ տվյալների (1974 թ. 97,0%): Երկրորդ և հետագա շաբաթներում ծլունակությունը նվազում է, իսկ ութերորդ շաբաթում այլևս չեն ծլում:

Սախարոզայի լուծույթում ծլեցնելիս բարձր ծլունակություն ցուցաբերում է առաջին շաբաթում՝ 5, 10, 15% լուծույթներում, որը համապատասխանաբար կազմում է 83, 86, 88%, որոնցից մաքսիմում ծլունակություն ստացվում է սախարոզայի 15,0% լուծույթում, իսկ առանձին տարիներին այն կազմում է 96,0% (1974 թ.):

Մթնոթյան պայմաններում ծլեցնելիս ստուգիչում ծաղկափոշին ցուցաբերում է բարձր ծլունակություն առաջին շաբաթում: Համեմատած լույսի պայմաններում ստացած տվյալների հետ, ծլունակությունն ավելի բարձր է և կազմում է 79,0%:

Սախարոզայի լուծույթում ծլեցնելիս դարձյալ բարձր ծլունակություն է ցուցաբերում սախարոզայի 10% լուծույթում, առաջին շաբաթում՝ կազմելով 89%, առանձին տարիներին՝ 98% (սախարոզայի 5,0% լուծույթում): Առավել բարձր կոնցենտրացիա ունեցող լուծույթում (20, 25%) ծլունակության տոկոսը բարձրանում է երկրորդ և երրորդ շաբաթներում, սակայն մաքսիմումի չի հասնում: Երկրորդ և երրորդ շաբաթներում ծլունակության բարձրացումը կարելի է բացատրել բջջահյուսվածքի և միջավայրի կոնցենտրացիաների տարբերություններով:

Persica vulgaris Mill. (որն գծադր կարմիր սորսը) ծաղկափռու ծվման
և կենսունակության պահպանման դիմադրական ըստ վեգետացիոն փուլերի
(1973—1975 թթ. ամփոփիչ տվյալները)

Փորձերի տարբեր- քանիքը ստիստիս- տիկ օր օր	Շաբաթները	Կոկոնապատում			Մշակապատում			Կտածադրակապում		
		լույսի պայման- ներում	մթն- թյան պայման- ներում	մթն- թյան պայման- ներում	լույսի պայման- ներում	մթն- թյան պայման- ներում	մթն- թյան պայման- ներում	լույսի պայման- ներում	մթն- թյան պայման- ներում	մթն- թյան պայման- ներում
I	Ստուգիչ	75,6	79,0	79,0	79,0	79,0	74,0	76,0	72,0	
	5	83,0	88,0	83,0	88,0	88,0	76,0	86,0	82,0	
	10	86,0	89,0	89,0	92,0	92,0	93,0	90,0	87,0	
	15	88,0	86,0	86,0	84,0	82,0	92,0	80,0	85,0	
	20	77,0	67,0	67,0	72,0	78,0	78,0	63,0	65,0	
II	25	19,0	6,0	6,0	19,0	43,0	43,0	26,0	16,0	
	Ստուգիչ	66,0	56,0	56,0	78,0	80,0	80,0	61,0	70,0	
	5	76,0	63,0	63,0	87,0	86,0	86,0	66,0	67,0	
	10	78,0	71,0	71,0	90,0	85,0	85,0	79,0	72,0	
	15	79,0	82,0	82,0	84,0	89,0	89,0	75,0	84,0	
III	20	76,0	72,0	72,0	79,0	74,0	74,0	74,0	78,0	
	25	43,0	28,0	28,0	53,0	68,0	68,0	40,0	54,0	
	Ստուգիչ	56,0	40,0	40,0	58,0	78,0	78,0	51,0	45,0	
	5	65,0	48,8	48,8	71,0	76,0	76,0	56,0	58,8	
	10	76,0	71,0	71,0	81,0	78,0	78,0	61,0	70,0	
IV	15	74,0	78,0	78,0	81,0	85,0	85,0	79,0	75,5	
	20	71,0	67,0	67,0	84,0	74,0	74,0	67,0	69,0	
	25	38,0	40,0	40,0	38,0	57,0	57,0	40,0	67,0	
	Ստուգիչ	53,0	27,0	27,0	44,0	56,0	56,0	24,0	30,0	
	5	65,0	44,0	44,0	70,0	69,0	69,0	47,0	53,0	
V	10	71,0	67,0	67,0	67,0	74,0	74,0	63,0	64,0	
	15	76,0	73,0	73,0	67,0	84,0	84,0	61,0	60,0	
	20	72,0	66,0	66,0	68,0	70,0	70,0	69,0	47,0	
	25	20,0	25,0	25,0	30,0	38,0	38,0	31,0	28,0	
	Ստուգիչ	29,0	20,0	20,0	25,0	28,0	28,0	5,0	5,0	
VI	5	48,0	30,0	30,0	33,0	54,0	54,0	24,0	35,0	
	10	60,0	65,0	65,0	57,0	66,0	66,0	38,0	51,0	
	15	57,0	69,0	69,0	65,0	74,0	74,0	50,0	43,0	
	20	53,0	55,0	55,0	58,0	64,0	64,0	32,0	30,0	
	25	15,0	22,0	22,0	34,0	23,0	23,0	19,0	28,0	
VII	Ստուգիչ	22,0	8,0	8,0	20,0	8,0	8,0	2,0	3,0	
	5	35,0	28,0	28,0	38,0	32,0	32,0	16,0	26,0	
	10	51,0	52,0	52,0	48,0	53,0	53,0	28,0	39,0	
	15	50,0	51,0	51,0	58,0	67,0	67,0	30,0	33,0	
	20	35,0	41,0	41,0	58,0	53,0	53,0	24,0	24,0	
VIII	25	25,0	16,0	16,0	33,0	23,0	23,0	13,0	13,0	
	Ստուգիչ	7,0	21,0	21,0	10,0	13,0	13,0	2,0	2,0	
	5	12,9	17,0	17,0	27,0	17,0	17,0	16,0	24,0	
	10	17,0	39,0	39,0	37,0	39,0	39,0	12,0	15,0	
	15	34,0	44,0	44,0	30,0	55,0	55,0	10,0	5,0	
IX	20	25,0	37,0	37,0	41,0	35,0	35,0	2,0	2,0	
	25	15,0	12,0	12,0	21,0	11,0	11,0	2,0	2,0	
	Ստուգիչ	10,0	7,0	7,0	5,0	8,0	8,0	2,0	2,0	
	5	10,0	20,0	20,0	17,0	14,0	14,0	2,0	2,0	
	10	10,0	17,0	17,0	23,0	15,0	15,0	2,0	2,0	
X	15	23,0	17,0	17,0	23,0	16,0	16,0	2,0	2,0	
	20	15,0	25,0	25,0	31,0	11,0	11,0	2,0	2,0	
	25	10,0	8,0	8,0	15,0	9,0	9,0	2,0	2,0	
	Ստուգիչ	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	
	5	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	2,0	

Ինչպես լույսի, այնպես էլ մթության պայմաններում ձլեցնելիս սախարոզայի լուծույթի օպտիմալ կոնցենտրացիան կարելի է համարել 5—15% լուծույթները:

Մաղկակալման փուլ—Այս սորտի ծաղկափռչին լույսի պայմաններում ձլեցնելիս ստուգիչում մաքսիմում ծլունակությունն ստացվում է առաջին շաբաթում, որը կազմում է 79,0%, երկրորդ շաբաթում՝ 78,0%, հետագա շաբաթների ընթացքում դիտվում է ծլունակության անկում:

Սախարոզայի լուծույթում ձլեցնելիս բարձր տոկոս ծլունակություն ստացվում է մեծ մասամբ 5, 10, 15% լուծույթներում՝ առաջին շաբաթում: Մլունակությունը, ըստ երեք տարվա տվյալների, համապատասխանաբար կազմում է 88, 92, 84%, մաքսիմում ծլունակություն ցուցաբերելով սախարոզայի 10,0% լուծույթում (առանձին տարիներին՝ 97,0%): Երկրորդ շաբաթից ծլունակությունը նվազում է, սակայն դեռևս պահպանվում է բարձր տոկոս: Սախարոզայի բարձր կոնցենտրացիա ունեցող լուծույթներում (20, 25%) երկրորդ շաբաթում, ինչպես նաև երրորդ շաբաթում առաջին շաբաթվա համեմատությամբ ծլունակությունը բարձրանում է, սակայն չի հասնում մաքսիմումին:

Մթության պայմաններում ընդհանուր առմամբ դիտվում է նույն օրինաչափությունը: Մլունակության մաքսիմումը կազմում է 93,0%, որն ստացվում է սախարոզայի 10% կոնցենտրացիա ունեցող լուծույթում ձլեցնելիս:

Ետծաղկակալման փուլ—Լույսի պայմաններում ձլեցնելիս, ստուգիչում մաքսիմում ծլունակություն ստացվում է առաջին շաբաթում, կազմելով 76,0%:

Սևխարոզայի լուծույթում ձլեցնելիս բարձր տոկոս ծլունակություն ստացվում է առաջին շաբաթում՝ 5, 10, 15% կոնցենտրացիա ունեցող լուծույթներում, համապատասխանաբար կազմելով 86, 90, 80%: Մաքսիմում ծլունակություն ստացվում է սախարոզայի նույնպես 10% լուծույթում, կազմելով 90,0% ծլունակություն: Երկրորդ շաբաթից ծլունակությունը նվազում է:

Մթության պայմաններում ստուգիչում ծլունակությունը կազմում է 72%, որը համընկնում է առաջին շաբաթվա ծլունակությանը:

Սախարոզայի լուծույթում ձլեցնելիս բարձր տոկոս ծլունակություն ստացվում է 5, 10, 15% կոնցենտրացիա ունեցող լուծույթներում, համապատասխանաբար կազմելով 82, 87, 85%: Առանձին տարիներին հասնում է մինչև 99,0%: Երկրորդ շաբաթից ծլունակությունը նվազում է, բայց համեմատաբար պահպանվում է բարձր ծլունակություն՝ 84%:

Այսպիսով, *P. vulgaris* Mill.-ի փոշեհատիկները վեգետացիոն բոլոր փուլերում ցուցաբերում են բարձր տոկոս ֆերտիլություն՝ 93,0%, առանձին տարիների կազմելով 98—99%:

Մաղկափռչու ցուցաբերած առանձնահատկությունները, կապված ծլունակության հետ, կարելի է բացատրել նրա հասունացման առտիճանով (ըստ վեգետացիոն տարբեր փուլերի), բջջահյուսված և միջավայրի կոնցենտրացիաների տարբերություններով, լուսային և մթության պայմանների տարբեր գրգռականության ազդեցություններով, ինչպես նաև ֆերմենտատիվ պրոցեսների տարբեր ակտիվությամբ:

P. vulgaris Mill. ծաղկափռոշու կենսունակությունը պահպանվում է ինը շաբաթից ավելի ծաղկակալման, որոշ դեպքերում նաև կոկոնակալման փուլերում, իսկ ևտծաղկակալման փուլում՝ ութ շաբաթ:

Խ. իլրոփյանի անվան հայկական
ստանկավարժական ինստիտուտ

Ստացված է 13. IV. 1979 թ.

О ДИНАМИКЕ ПРОРАСТАНИЯ ПЫЛЬЦЫ *PERSICA* *VULGARIS* MILL. (СОРТ ЛОДЗ ГЦАВОР ҚАРМИР) ПО ФАЗАМ ВЕГЕТАЦИИ

В. С. ТОВМАСЯН

Результаты эксперимента показали, что пыльцевые зерна *Persica vulgaris* Mill. показывают высокую фертильность во все фазы вегетации в среднем 93,0%, в отдельные годы—99,0%.

Жизнеспособность пыльцевых зерен сохраняется в фазы бутонизации и цветения около девяти недель, в фазу отцветания—восемь недель.

Л И Т Е Р А Т У Р А

1. Агабян В. Ш. Биолог. ж. Армении, 20, 12, 1967.
2. Зарян А. Р. Биолог. ж. Армении, 21, 11, 1968.
3. Капинос Г. Е. Тр. Ин-та Ботаники АН Аз. ССР, 27, 1957.
4. Магешвири П. Эмбриология покрытосеменных. М., 1954.
5. Радионенко Г. И. Род. Ирис. М.—Л., 1961.
6. Поддубная-Арнольди В. А. Пробл. бот., 3, 1958.
7. Тихминаева Е. А. Ботан. журн., 9, 10, 1974.
8. Товмасын В. С. Биолог. ж. Армении, 30, 10, 1977.
9. Товмасын В. С. Биол. ж. Армении, 31, 10, 1978.